Հաշվետվություն

Անունը, Ազգանունը
Միեր Գրիգորյան

Զբաղեցրած պաշտոնը
Փոխվարչապետ

Գործուղման վայրը և ժամկետները
Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 12.07.18-14.07.18

Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)
Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նիստի ընթացքում ընդունվել են որոշումներ ԵԱՏՄ-ի թվային օրակարգի իրականացման, ներքին շուկայի, առևտրային համագործակցության, էներգետիկայի, մաքսային կարգավորման ոլորտների գործառնության վերաբերյալ: Փոխվարչապետները քննարկել են ԵԱՏՄ ներքին շուկայի առավել զգայուն խնդիրները միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի խոչընդոտները վերացնելու ուղղությամբ համալիր աշխատանքի շրջանակներում, դրանց վերաբերյալ ընդունվել են մի շարք որոշումներ:

Խնդիրներից մեկը ԵԱՏՄ պետությունների կողմից էլեկտրոնային թվային ստորագրության փոխադարձ ճանաչման բացակայությունն է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը հանձնարարել է հանձնաժողովի կոլեգիային մինչև սեպտեմբերի 1-ը հաստատել միջոցառումների ծրագիրը այս հարցի առնչությամբ:

Մտքեր են փոխանակվել նաև ԵԱՏՄ պետություններում իրենց ձեռնարկություններում մի շարք ապրանքների այլ անդամ պետություններում պետական գնումների գործընթացին մասնակցելու արգելքի վերաբերյալ: Այս հարցի լուծման համար Հանձնաժողովի խորհուրդը հանձնարարել է միության անդամ պետություններին մինչև օգոստոսի 1-ը ներկայացնել հանձնաժողով իրենց առաջարկությունները պետական գնումներում արգելված ապրանքների ցանկի վերաբերյալ: Այնուհետև ԵՏՀ հանձնաժողովը մինչև ս.թ.սեպտեմբերի 1-ը կքննարկի ներկայացված առաջարկությունները և կզեկուցի մշակված որոշումների վերաբերյալ հանձնաժողովի խորհրդի հերթական նստաշրջանի ժամանակ: Հաջորդ հարցը Ղրղզստանի Հանրապետության կողմից ԵԱՏՄ պետություններից ներմուծվող առանձին

ապրանքների նպատմամբ վերահսկվող գների նվազագույն մակարդակին էր վերաբերում: Ապահովելու համար արդար մրցակցությունը ԵՏՀ խորհուրդը առաջարկել է Ղրղզստանի կառավարությանը մինչև ս.թ.հոկտեմբերի 1-ը ազգային իրավական ակտերը համապատասխանեցնել ԵԱՏՄ համապատասխան օրենսդրության հետ: Նիստի մասնակիցները քննարկել են միության պետություններից ներմուծվող ալկոհոլային և ծխախոտային ապրանքների վրա ակցիզների և ԵԱՏՄ շրջանակներում ալկոհոլային շուկայի կարգավորման, ինչպես նաև ալկոհոլային արտադրանքի նկատմամբ երաշխավորության վճարի վերաբերյալ հարկային քաղաքականության համաձայնությունների փաթեթի ստորագրման հարցը:

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, որպես Հայաստանի և Ռուսաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ հանդիպել է հանձնաժողովի ռուսական կողմի համանախագահ, տրանսպորտի նախարար Եվգենի Դիտրիխի հետ: Հանդիպման ընթացքում ընդգծվել է հայ-ռուսական առևտրատնտեսական կապերի խորացման, ինչպես նաև փոխադարձ առևտրաշրջանառության հետագա աճի ուղղությամբ աշխատանքը շարունակելու կարևորությունը: Քննարկվել են հայ-ռուսական ներդրումային հիմնադրամի ստեղծման հարցերը, ընդգծվել է նաև հայկական արտադրանքի՝ ռուսական շուկա մատակարարման ընդլայնման հարցի մշակման, տեղեկատվության փոխանակման գործում թվային մեթոդների ներգրավման անհրաժեշտությունը: Անդրադարձ է կատարվել երկու երկրների բիզնես շրջանակների միջև փոխգործակցության հանձնաժողովի ստեղծման գաղափարին: Հանդիպմանը նշվել է, որ շարունակվում է աշխատանքը «Վերին Լարսի» անցակետի գործառնության կատարելագործման ուղղությամբ: Ռուսական կողմն առաջարկել է դիտարկել Հայաստանում «Պլատոն» համակարգի նման ավտոճանապարհներից օգտվելու համար վճարներ գանձելու համակարգ կիրառելու նպատակահարմարությունը:

<u>Գործուղվողը</u>
Մհեր Գրիգորյան
<u>Ամսաթիվը</u>
20.06.18